ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 02/2022-2024-Ա/Վ

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 11 մարտի, 2024 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի, Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ Վայոց Ձորի Վայք համայնքի ղեկավար Մխիթար Կոլյայի Մաթևոսյանի նկատմամբ 2022 թվականի սեպտեմբերի 16-ին անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման և իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքի վերաբերյալ հարուցված թիվ 02/2022 վարույթի նյութերը.

ՊԱՐԶԵՑ

I. Նախապատմություն

2022 թվականի օգոստոսի 11-ին «Հետք» էլեկտրոնային լրատվամիջոցի «Վայքի համայնքապետը 537 միլիոն դրամի պայմանագրեր է կնքել իր կնոջ ընկերության հետ» վերտառությամբ[1] հրապարակման հիման վրա 2022 թվականի սեպտեմբերի 16-ին Հանձնաժողովը կայացրել է թիվ 02/2022 որոշումը՝ անհամատեղելիության

[1] (https://hetq.am/hy/article/147254)

պահանջների առերևույթ խախտման և իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքի վերաբերյալ:

<u>Անհամատեղելիության պահանջների վերաբերյալ</u>

1. Մխիթար Մաթևոսյանը ՀՀ վարչապետի 2021 թվականի հոկտեմբերի 12-ի 1146-Ա որոշմամբ նշանակվել է ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավարի պաշտոնակատար:
2. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքէջում հրապարակված տեղեկատվության համաձայն՝ Մխիթար Մաթևոսյանը 2021 թվականի դեկտեմբերի 5-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքներով ընտրվել է ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավար:
3. ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 17-ի N 190 որոշման համաձայն՝ Մխիթար Մաթևոսյանը 2021 թվականի դեկտեմբերի 17-ին ստանձնել է ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավարի պաշտոնը:
4. Վայքի համայնքապետարանի պաշտոնական կայքէջում հրապարակված կենսագրական տվյալների համաձայն՝ Մխիթար Մաթևոսյանը 2012-2021 թվականներին զբաղվել է ձեռնարկատիրական գործունեությամբ, եղել է «Մավշին» ՍՊ ընկերության տնօրենը:
5. Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ Մխիթար Մաթևոսյանը 2013 թվականի հունվարի 16-ից մինչև 2022 թվականի փետրվարի 16-ը հանդիսացել է «Մավշին» ընկերության (ՀՎՀՀ) (այսուհետ նաև՝ Ընկերություն) միակ բաժնետերը և մինչև 2022 թվականի փետրվարի 18-ը՝ գործադիր մարմնի ղեկավարը:
6. Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների (Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային կայքից բեռնված էլեկտրոնային քաղվածք) համաձայն՝ **2022 թվականի փետրվարի 16-ից** Ընկերության 100% բաժնեմասի բաժնետեր է հանդիսանում Մխիթար Մաթևոսյանի կինը՝ Մերի Մեխակի Մարգարյանը, ով 2022 թվականի փետրվարի 18-ից զբաղեցնում է ընկերության գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնը (հիմքը՝ Մերի Մարգարյանի

կողմից տրված լիազորագրի հիման վրա հանդես եկող Հովսեփ Սարգսյանի 2022 թվականի փետրվարի 14-ի դիմումը, Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային համակարգից ներբեռնված փաստաթուղթ և գույքի նվիրատվության պայմանագիր, որով Մխիթար Մաթևոսյանն Ընկերության իր բաժնեմասը 2022 թվականի փետրվարի 11-ին օտարել է կնոջը՝ Մերի Մարգարյանին: Ընկերության լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության դադարման մասին տեղեկություններ միասնական գրանցամատյանում առկա չեն:

7. Ընկերությունում 100% բաժնեմասնակցության վերաբերյալ տվյալներ ներառված են Մխիթար Մաթևոսյանի կողմից 2022 թվականի հունիսի 8-ին ներկայացված «Պաշտոնատար անձի՝ 2021 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագրի» «Ե.1 Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» բաժնում, սակայն Ընկերության՝ այլ անձի կողմից կառավարվելու, հավատարմագրային կառավարման հանձնված լինելու մասին տվյալներ հայտարարագրի համապատասխան բաժիններում ներկայացված չեն:
8. 2022 թվականի սեպտեմբերի 16-ին Հանձնաժողովը ընդունել է թիվ 02/2022 որոշումը Մխիթար Մաթևոսյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման և իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքի վերաբերյալ վարույթ հարուցելու մասին:
9. 2022 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ Ե-01/2367-2022 գրությամբ անհամատեղելիության պահանջների և իրավիճակային շահերի բախման առերևույթ խախտման վերաբերյալ վարչական վարույթ հարուցելու մասին թիվ 02/2022 որոշումը փոստային ծառայության միջոցով ուղարկվել է Մխիթար Մաթևոսյանին՝ միաժամանակ առաջարկելով ներկայացնել պարզաբանում քննարկվող հարցերի առնչությամբ և դրան կցել փաստարկների հիմնավորվածությունը հավաստող նյութեր:
10. **2022 թվականի հոկտեմբերի 24-ին Հանձնաժողովում ստացված թիվ Մ-4483 գրությամբ Մխիթար Մաթևոսյանը պարզաբանում** է ներկայացրել առ այն, որ՝

- ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավարի պաշտոնը ստանձնելու պահին չի հանդիսացել Ընկերության տնօրեն, մասնավորապես Վայք համայնքի ղեկավարի պաշտոնը ստանձնելուց առաջ՝ դեռևս 2021 թվականի հոկտեմբերի 8-ին Պետական եկամուտների կոմիտե ներկայացված դիմումի համաձայն դադարեցրել է Ընկերության հետ աշխատանքային հարաբերությունները:

- Ընկերության՝ իրեն պատկանող բաժնեմասի վերաբերյալ 2022 թվականի փետրվարի 11-ին կնքվել է նվիրատվության պայմանագիր, որով իր բաժնեմասն օտարվել է կնոջը՝ Մերի Մարգարյանին:

11. 2022 թվականի նոյեմբերի 23-ի թիվ Մ-4860 գրությամբ ի պատասխան Հանձնաժողովի պարզաբանումների հիմնավորվածությունը հավաստող նյութեր ներկայացնելու վերաբերյալ թիվ Ե-01/2746-2022 գրության Մխիթար Մաթևոսյանը ներկայացրել է պարզաբանումների հիմնավորվածությունը հավաստող նյութեր, մասնավորապես՝

- Ընկերության տեղեկանքն առ այն, որ Մխիթար Մաթևոսյանը 2021 թվականի հոկտեմբերի 8-ից սկսած չի աշխատել «Մավշին» ՍՊԸ-ում:

- Ընկերության տեղեկանքը 2022 թվականի հունվար-փետրվար ամիսներին ընկերության կողմից գործարքներ /պայմանագրեր, համաձայնագրեր չկնքելու և միակ մասնակցի կողմից որևէ որոշում, հրաման, կարգադրություն չկայացվելու վերաբերյալ:

- Ընկերության տեղեկանքն ընկերության տարեկան շրջանառության վերաբերյալ:

- Պետական եկամուտների կոմիտեի վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի անհատական տվյալների վերաբերյալ քաղվածքը, համաձայն որի՝ Մխիթար Մաթևոսյանի՝ Ընկերության հետ աշխատանքային հարաբերությունները դադարեցվել են 2021 թվականի հոկտեմբերի 8-ին (քաղվածքում պաշտոնը նշված է «Տնօրեն»):

- Վայք քաղաքում և Զառիթափ համայնքում Ընկերության կողմից 2016-2021 թթ. ընկած ժամանակահատվածում կատարված պայմանագրերի անվանումների և վերջնական արժեքների վերաբերյալ տեղեկատվություն՝ կցելով նաև թվով 11 պայմանագրերի պատճենները:

Վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներ ստանալու նպատակով Հանձնաժողովը գրավոր դիմել է Ընկերությանը, Վայքի Համայնքապետարանին, «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ին, Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը, ինչպես նաև Պետական եկամուտների կոմիտեին:

12. **Վարույթի շրջանակներում 2022 թվականի նոյեմբեր 18-ին Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից** ստացված տեղեկատվության (կից նյութերի) համաձայն՝ պետական միասնական գրանցամատյանում Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի փոփոխության համար հիմք է հանդիսացել Ընկերության միակ մասնակից Մերի Մարգարյանի՝ 2022 թվականի փետրվարի 16-ի թիվ 1/22 որոշումը՝ Ընկերության գործադիր մարմնի ղեկավար Մխիթար Մաթևոսյանի լիազորությունները դադարեցնելու և նոր ղեկավար նշանակելու վերաբերյալ: Նշված գրության համաձայն՝ մինչև 2022 թվականի նոյեմբերի 18-ը Ընկերության գործադիր մարմնի ղեկավարն է հանդիսացել Մերի Մարգարյանը և գործադիր մարմնի ղեկավարի այլ փոփոխություն չի գրանցվել:

13. **2022 թվականի դեկտեմբերի 6-ին Ընկերության** կողմից ներկայացված գրության և կից նյութերի համաձայն՝

- 13.10.2021 - 16.02.2022 թթ. ընկած ժամանակահատվածում Ընկերության **տնօրենը հանդիսացել է Արտակ Աշոտի Հովհաննիսյանը** և ամբողջությամբ կատարել է իր ստանձնած կառավարչական գործողությունները՝ պայմանագրերի, համաձայնագրերի, աշխատանքային պայմանագրերի կնքման, աշխատողների աշխատանքի ընդունման և ազատման մասին անհատական իրավական ակտերի ընդունման և այլ անձանց լիազորելու գործառույթները: Ի հավաստումն վերոնշյալի ներկայացվել են Ընկերության աշխատակիցների աշխատանքային պայմանագրերը, ինչպես նաև աշխատանքից ազատման դիմումները և հրամանները:

- 16.02.2022 - 18.08.2022 թթ. ժամանակահատվածում Ընկերության տնօրենը հանդիսացել է Մերի Մեխակի Մարգարյանը:

- 19.08.2022 - 24.11.2022 թթ. ժամանակահատվածում Արտակ Աշոտի Հովհաննիսյանը հանդիսացել է Ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար:

- 2022 թվականի նոյեմբերի 25-ին Արտակ Աշոտի Հովհաննիսյանը նշանակվել է Ընկերության տնօրեն, ի հավաստումն որի ներկայացվել է Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության միասնական գրանցամատյանից քաղվածք:

- 2022 թվականի հունվար - փետրվար ամիսներին Ընկերության կողմից բոլոր գործարքներում հանդես է եկել Արտակ Աշոտի Հովհաննիսյանը:

- Ներկայացվել են 2022 թվականի հունվար - փետրվար ամիսներին Պետական եկամուտների կոմիտեի առցանց համակարգից արտահանված հարկային հաշիվների վերաբերյալ տվյալները:

- Ընկերության Գրությանը կից՝ ի թիվս այլ նյութերի, ներկայացվել է նաև՝

ա) Ընկերության միակ մասնակից Մխիթար Մաթևոսյանի 2021 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 31 հրամանը՝ **Արտակ Աշոտի Հովհաննիսյանին Ընկերության գլխավոր տնօրեն նշանակելու վերաբերյալ:**

բ) Ընկերության միակ մասնակից Մերի Մարգարյանի 2022 թվականի օգոստոսի 18-ի թիվ 34 հրամանը՝ Արտակ Աշոտի Հովհաննիսյանին Ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու վերաբերյալ:

14. **2022 թվականի նոյեմբերի 11-ին և դեկտեմբերի 6-ին Պետական եկամուտների կոմիտեից** ստացվել են տեղեկություններ Ընկերության «գործող» կարգավիճակի, իրացման շրջանառության, վարձու աշխատողների, ինչպես նաև ըստ տնտեսական գործունեության դասակարգչի առկա Ընկերության ծավալած գործունեության վերաբերյալ տվյալների, հարկային մարմին ներկայացրած հարկային հաշվարկների վերաբերյալ, որոնց համաձայն՝

- Ընկերությունը հաշվառվել է 2013 թվականի հունվարի 16-ին և ունի «գործող» կարգավիճակ:

- Մխիթար Մաթևոսյանի կողմից Ընկերության հետ աշխատանքային հարաբերությունները դադարեցվել են **2021 թվականի հոկտեմբերի 8-ին**:

- 2021 թվականի դեկտեմբեր - փետրվար ամիսների ընթացքում Ընկերության իրացման շրջանառությունը կազմել է ՀՀ դրամ:

- Ներկայացվել է 01.10.2021 - 31.03.2022 թթ. ընկած ժամանակահատվածում Ընկերության կողմից ներկայացված գրանցման հայտերի վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև Ընկերության աշխատողների ցանկը՝ 2017-2021 թվականների համար:

- 2022 թվականի հունվար - փետրվար ամիսների ընթացքում, ըստ տնտեսական գործունեության դասակարգչի, առկա են Ընկերության ծավալած գործունեության վերաբերյալ տվյալներ

- Ներկայացվել են Ընկերության կողմից ըստ հայտարարագրած գործունեության ոլորտների հարկային մարմին ներկայացրած հարկային հաշվարկների պատճենները:

15. Մխիթար Մաթևոսյանի՝ **այլ առևտրային կազմակերպություններում** հնարավոր բաժնեմասնակցության, ինչպես նաև գործադիր մարմնում ղեկավար պաշտոն զբաղեցնելու վերաբերյալ տվյալներ ստանալու նպատակով ուսումնասիրվել են պետական ռեգիստրի միասնական գրանցամատյանում առկա տվյալները, ինչպես նաև կատարվել են հարցումներ: Նշված հարցումների արդյունքում պարզվել է, որ Մխիթար Մաթևոսյանը բաժնեմասնակցություն ունի «Մաթևոսյան Քոնսթրաքշնս» (ՀՎՀՀ՝) ՍՊԸ-ում, ինչպես նաև 2007 թվականի հունիսի 13-ին հաշվառվել է որպես «Մխիթար Մաթևոսյան» ԱՁ և համաձայն պետական ռեգիստրի միասնական գրանցամատյանի տվյալների՝ 2013 թվականի հունվարի 29-ից հանված է հաշվառումից:

2022 թվականի դեկտեմբերի 6-ին Պետական եկամուտների կոմիտեից ստացված գրության համաձայն՝ «Մաթևոսյան Քոնսթրաքշնս» ՍՊԸ-ի գործունեությունը կասեցված է 2020 թվականի նոյեմբերի 27-ից:

16. **2022 թվականի դեկտեմբերի 5-ին «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ից** ստացված տեղեկատվության համաձայն՝ 2022 թվականի դեկտեմբերի 2-ի դրությամբ արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում Մխիթար Մաթևոսյանի տվյալներով հաշվետեր գրանցված չէ:

<u>Շահերի բախման վերաբերյալ</u>

17. Գնումների armeps համակարգի տվյալների համաձայն՝ 2022 թվականի հունվարի 1-ից մինչև օգոստոսի 16-ը Ընկերությունը ներկայացրել է գնման գործընթացի մասնակցության 8 հայտ (6-ը Վայքի համայնքապետարանի կողմից պատվիրված գնման գործընթացներում) և կնքել 4 պայմանագիր: Պայմանագրերի ընդհանուր արժեքը կազմել է շուրջ 488,000,000.00 (չորս հարյուր ութսունութ միլիոն) ՀՀ դրամ: Բոլոր 4 պայմանագրերը կնքվել են Վայքի համայնքապետարանի հետ: Պայմանագրերից երկուսը գնանշման հարցում ընթացակարգով, երկուսը՝ բաց մրցույթով:

- Վայքի համայնքապետարանը Ընկերության հետ գնման թվով 4 պայմանագրերը (ծածկագրեր՝ ՎՁՄ-ՎՀ-ԳՀԱՇՁԲ-22/7, ՎՁՄ-ՎՀ-ԳՀԱՇՁԲ-22/6, ՎՁՄ-ՎՀ-ԲՄԱՇՁԲ-22/1, ՎՁՄ-ՎՀ-ԲՄԱՇՁԲ-22/2-1) կնքել է ի դեմս համայնքի ղեկավար Մխիթար Մաթևոսյանի և վերոնշյալ պայմանագրերը ստորագրված են վերջինիս կողմից:

18. Վարույթի շրջանակներում 2022 թվականի նոյեմբերի 11-ին թիվ Ե-01/2758-2022 գրությամբ Վայոց Ձորի մարզի Վայքի համայնքապետարանից պահանջվել են «Մավշին» ՍՊ ընկերության և Վայքի համայնքապետարանի միջև 2022 թվականին կնքված թվով 4 (ծածկագրեր՝ ՎՁՄ-ՎՀ-ԳՀԱՇՁԲ-22/7, ՎՁՄ-ՎՀ-ԳՀԱՇՁԲ-22/6, ՎՁՄ-ՎՀ-ԲՄԱՇՁԲ-22/1, ՎՁՄ-ՎՀ-ԲՄԱՇՁԲ-22/2-1) պայմանագրերի կնքման համար հիմք հանդիսացած գնումների պլանավորման, գնման առարկայի բնութագրի հաստատման, գնումների նախապատրաստման, գնման ընթացակարգի ապահովման, պայմանագրի կնքմանը, ինչպես նաև կատարմանը վերաբերող՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ամբողջական (այդ թվում՝ այլ մասնակիցների հայտերի գնահատմանն առնչվող) փաստաթղթերի լուսապատճենները, ինչպես նաև գնման պլանավորման գործընթացին առնչվող այն փաստաթղթերի լուսապատճենները, որոնցով կարող են հիմնավորվել կարիքի ձևավորման, պահանջի ծագման և գնումների պլանում դրա ներառման անհրաժեշտությունը: Նշված գրությանն ի պատասխան՝ Վայքի համայնքապետարանի կողմից 2022 թվականի նոյեմբերի 11-ին թիվ 1214 գրությամբ Հանձնաժողովին է ներկայացվել Վայքի համայնքապետարանի և «Մավշին» ՍՊ ընկերության միջև 2022 թվականին կնքված թվով 4 (ծածկագրեր՝ ՎՁՄ-ՎՀ-ԳՀԱՇՁԲ-22/7, ՎՁՄ-ՎՀ-ԳՀԱՇՁԲ-22/6, ՎՁՄ-ՎՀ-ԲՄԱՇՁԲ-22/1, ՎՁՄ-ՎՀ-ԲՄԱՇՁԲ-22/2-1) պայմանագրերի կնքման համար հիմք հանդիսացած գնման ընթացակարգին առնչվող փաստաթղթերի փաթեթը, այդ թվում՝ Վայք համայնքի ղեկավարի կողմից հաստատված գնումների պլանը: Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ՝

ա) Թիվ **ՎՁՄ-ՎՀ-ԲՄԱՇՁԲ-22/2-1** պայմանագրի կնքումն իրականացվել է **բաց մրցույթ ընթացակարգով**:

1. Գնումների պլանում գնման ձևը սահմանված է **գնանշման հարցում ընթացակարգով**:
2. **Պայմանագրի առարկան** է՝ Վայք քաղաքի Շահումյան փողոցի ասֆալտապատման շինարարական աշխատանքների կատարումը **405,600,000.00** (չորս հարյուր հինգ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

3. Գնման գործընթացը կազմակերպվել է ՀՀ կառավարության կողմից իրականացվող *սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում*: Ֆինանսավորումն իրականացվել է այլ ներդրողի, համայնքապետարանի ու պետական բյուջեներից, համապատասխան մասնաբաժիններով:
4. Պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմված արձանագրության հավելված 1-ով սահմանված հայտում պայմանագրի **նախահաշվային գինը** սահմանված է **395,289,500** ՀՀ դրամ:
5. Մրցույթին մասնակցության հայտ են ներկայացրել **2 ընկերություններ՝** «Մավշին» ՍՊԸ-ն և «Թրենդ» ՍՊԸ-ն:
6. Մրցույթի ընտրված մասնակցին որոշելու համար **կիրառված չափանիշը** հանդիսացել է ներկայացված **նվազագույն գնային առաջարկը**: «Մավշին» ՍՊԸ-ն առաջարկել է **405,600,000.00** ՀՀ դրամ, «Թրենդ» ՍՊԸ-ն՝ **395,270,390.00** ՀՀ դրամ նախահաշվային գին:
7. Գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ մասնակիցների կողմից ներկայացված **հայտերում առկա են եղել անհամապատասխանություններ**, մասնավորապես «Մավշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաթեթում բացակայել է **ծավալաթերթ-նախահաշիվը**, իսկ «Թրենդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաթեթում՝ համապատասխան աշխատանքներ կատարելու իրավունքը հավաստող **լիցենզիաները**:
8. 7-րդ կետում նշված անհամապատասխանության առնչությամբ Գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ ծանուցմամբ սահմանված ժամկետում «Մավշին» ՍՊԸ-ն ներկայացրել է ծավալաթերթ-նախահաշիվը, իսկ «Թրենդ» ՍՊԸ-ն՝ ենթակապալի/գործակալության պայմանագիր և ենթակապալառուի լիցենզիաներ, ինչի արդյունքում որոշվել է «Մավշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը **գնահատել բավարար**, իսկ «Թրենդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ ***անբավարար***՝ *«լիցենզիաների բացակայության պատճառով հաշվի առնելով, որ Պայմանագիրը գործակալության կամ ենթակապալի միջոցով իրականացնելու պարագայում մասնակիցը հայտով չի ներկայացրել գործակալության կամ ենթակապալի պայմանագրի պատճենը»:*
9. 2022 թվականի հուլիսի 28-ին Վայքի համայնքապետարանը ներկայացրել է **հայտարարություն**, համաձայն որի՝ մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված

մասնակցի՝ «Մավշին» ՍՊԸ-ի հետ, պայմանագիր կնքելու վերաբերյալ որոշում է կայացվել:

10. Պայմանագիրը կնքվել է **2022 թվականի օգոստոսի 4-ին 405,600,000.00** (չորս հարյուր հինգ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով: Պայմանագիրը ստորագրված է «Մավշին» ՍՊԸ-ի տնօրեն Մերի Մարգարյանի և Վայքի համայնքապետ Մխիթար Մաթևոսյանի կողմից:

11. **2022 թվականի օգոստոսի 11-ին «Հետք»** էլեկտրոնային լրատվամիջոցի կողմից հրապարակվել է «Վայքի համայնքապետը 537 միլիոն դրամի պայմանագրեր է կնքել իր կնոջ ընկերության հետ» վերտառությամբ **հոդվածը**:

12. 2022 թվականի սեպտեմբերի 5-ին «Մավշին» ՍՊԸ-ի տնօրեն Արտակ Հովհաննիսյանը **գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից** ուղարկված **ծանուցագրով** տեղեկացվել է, որ *«գնման ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից անզգուշաբար հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է գնման առարկայի նախահաշվային գինը»* և **առաջարկվել է** ներկայացնել **նոր՝ նվազեցված գնային առաջարկ**:

13. 2022 թվականի սեպտեմբերի 6-ին «Մավշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է, ծավալաթերթ-նախահաշիվը, *նվազեցված գնային առաջարկը և կնքման ենթակա պայմանագրի նախագիծը*:

14. **2022 թվականի սեպտեմբերի 6-ին կնքվել է նոր պայմանագիր 394,881,470.00** (երեք հարյուր իննսունչորս միլիոն ութ հարյուր ութսունմեկ հազար չորս հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով և կատարման նոր ժամկետով: Պայմանագիրը ստորագրված է «Մավշին» ՍՊԸ-ի տնօրեն Արտակ Հովհաննիսյանի կողմից:

Բ) Թիվ ՎՁՄ-ՎՀ-ԳՀԱՇՁԲ-22/7 պայմանագրի կնքումն իրականացվել է գնանշման հարցման ընթացակարգով:

Գնման պլանում բացակայում է պայմանագրի առարկան, այն է՝ Վայք քաղաքում բազմաբնակարան շենքերի հարակից տարածքներում փոսալցումներ կատարելու աշխատանքները **6,498,000.00** (վեց միլիոն չորս հարյուր իննսունութ հազար) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

19. Հանձնաժողովը սույն վարույթի շրջանակներում քննարկվող փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում գալով այն հետևության, որ

կատարված արարքները պարունակում են ՀՀ քրեական օրենսգրքի 283-րդ կամ 441-րդ և 457-րդ հոդվածներով նախատեսված առերևույթ հանցագործության հատկանիշներ, հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասը, 2022 թվականի դեկտեմբերի 9-ին որոշում է ընդունել թիվ 02-2022 վարույթը կասեցնելու և վարույթի նյութերը՝ քրեադատավարական ընթացակարգերի շրջանակում գնահատելու, իսկ համապատասխան հիմքերի առկայության դեպքում ընթացք տալու նպատակով Գլխավոր դատախազություն ներկայացնելու վերաբերյալ:

20. Հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 01/3142-2022 գրությամբ վարույթի նյութերն ուղարկվել են Գլխավոր դատախազություն:

21. 2024 թվականի փետրվարի 26-ին Հանձնաժողովում մուտքագրված Գլխավոր դատախազի 2024 թվականի փետրվարի 23-ի թիվ ելից 26/189գ-24 գրությանը կից ներկայացվել է կասեցված վարույթի հիմքով հարուցված քրեական գործը Քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցանքի բացակայությունը հաստատվելու հիմքով կարճելու մասին որոշումը, որը հաստատվել է նաև հսկող դատախազի կողմից:

22. 2024 թվականի մարտի 4-ին հրավիրված Հանձնաժողովի նիստով որոշվել է վերսկսել թիվ 02/2022 կասեցված վարույթը՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված կարգով:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

2.1 2022 թվականի հոկտեմբերի 24-ին Հանձնաժողովում ստացված թիվ Մ-4483 գրությամբ վարույթում քննարկվող առերևույթ խախտումների վերաբերյալ Մխիթար Մաթևոսյանը պարզաբանում է ներկայացրել առ այն, որ

- ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավարի պաշտոնը ստանձնելու պահին չի հանդիսացել Ընկերության տնօրեն, մասնավորապես Վայք համայնքի **ղեկավարի պաշտոնը ստանձնելուց առաջ՝ դեռևս 2021 թվականի հոկտեմբերի 8-ին** Պետական եկամուտների կոմիտե ներկայացված դիմումի համաձայն դադարեցրել է Ընկերության հետ աշխատանքային հարաբերությունները:

- Ընկերության՝ իրեն պատկանող բաժնեմասի վերաբերյալ կնքվել է նվիրատվության պայմանագիր, որով իր բաժնեմասն օտարվել է կնոջը՝ Մերի Մարգարյանին: Նվիրատվության պայմանագիրը կնքվել է 2022 թվականի փետրվարի

11-ին, այսինքն՝ իր պաշտոնը ստանձնելուց մոտ մեկ ամիս և քսան օր հետո, սակայն, ըստ վերջինիս, այն չի կարող դիտարկվել, որպես «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի պահանջների խախտում, քանի որ Ընկերությունը 2021 թվականի դեկտեմբերի 17-ից մինչև 2022 թվականի փետրվարի 18-ն ընկած ժամանակահատվածում որևէ գործունեությամբ չի զբաղվել, չի մասնակցել մրցույթների, չի կատարել շինարարական և այլ աշխատանքներ, չի մատուցել որևէ ծառայություն, ձեռք չի բերել կամ օտարել որևէ գույք: Վարույթի մասնակիցը նշել է նաև որ՝

- Ընկերությունը 2013 թվականին ստեղծման օրվանից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 17-ը հիմնական գործունեություն է իրականացրել Վայոց Ձորի մարզում՝ առավելապես Զառիթափ համայնքում: 2021 թվականին Վայք համայնքը խոշորացվել է և ներառել նաև Զառիթափ համայնքն իր գյուղերով, որոնք մինչ այդ հանդիսանում էին առանձին համայնքներ և իրականացնում առանձին գնման գործընթացներ: Ընկերությունը նախկինում նույնպես մասնակցել է Վայք համայնքի պատվիրված մրցույթներին, որոնց արդյունքում մի քանի մրցույթների հաղթող է ճանաչվել և կնքվել են համապատասխան պայմանագրեր, ինչպես նաև Վայոց Ձորի մարզի այլ համայնքներում իրականացված մրցույթներին մասնակցության արդյունքում առկա են բազմաթիվ շահած մրցույթներ և կատարված աշխատանքներ:

- Իր գործողություններում շահերի բախում առկա չէ: Ցանկացած մրցույթ իրականացվում է խիստ օբյեկտիվության շրջանակներում: Եթե հաղթող է ճանաչվել «Մավշին» ՍՊ ընկերությունը, դա նշանակում է, որ բոլոր չափանիշներով, բոլոր ներկայացված պայմաններով առավել է եղել այդ պահին մասնակցություն ունեցող այլ ընկերություններից:

III. Համայնքի ղեկավարի գործունեությանն առնչվող փեղեկություններ

Վայոց Ձորի մարզպետարանի պաշտոնական կայքէջում իրական ռեժիմում հրապարակված կենսագրական տվյալների համաձայն՝ Մխիթար Մաթևոսյանը 2021 թվականի դեկտեմբերի 17-ից զբաղեցնում է Վայք համայնքի ղեկավարի պաշտոնը:

IV. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

4.1. Մխիթար Մաթևոսյանը ՀՀ վարչապետի 2021 թվականի հոկտեմբերի 12-ի 1146-Ա որոշմամբ նշանակվել է ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավարի պաշտոնակատար:

4.2. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքէջում հրապարակված տեղեկատվության համաձայն՝ Մխիթար Մաթևոսյանը 2021 թվականի դեկտեմբերի 5-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքներով ընտրվել է ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավար:

4.3. Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 102-րդ հոդվածի 3.2-րդ մասով սահմանված ընտրությունների արդյունքների վերաբերյալ դրույթը՝ ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 17-ի N 190 որոշման համաձայն՝ Մխիթար Մաթևոսյանը 2021 թվականի դեկտեմբերի 17-ին ստանձնել է ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավարի պաշտոնը:

4.4. Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ Մխիթար Մաթևոսյանը 2013 թվականի հունվարի 16-ից մինչև 2022 թվականի փետրվարի 16-ը հանդիսացել է «Մավշին» ընկերության միակ բաժնետերը և մինչև 2022 թվականի փետրվարի 18-ը՝ գործադիր մարմնի ղեկավարը:

4.5. Մխիթար Մաթևոսյանը 2022 թվականի փետրվարի 11-ին կնքված Բաժնեմասերի սահմանման և Բաժնեմասի նվիրատվության պայմանագրի համաձայն՝ Ընկերության իր բաժնեմասը 2022 թվականի փետրվարի 11-ին օտարել է կնոջը՝ Մերի Մարգարյանին:

4.6. Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ **2022 թվականի փետրվարի 16-ից** Ընկերության 100% բաժնեմասի բաժնետեր է հանդիսանում Մխիթար Մաթևոսյանի կինը՝ Մերի Մեխակի Մարգարյանը, ով 2022 թվականի փետրվարի 18-ից զբաղեցնում է ընկերության գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնը (հիմքը՝ Մերի Մարգարյանի կողմից տրված լիազորագրի հիման վրա հանդես եկող Հովսեփ Սարգսյանի 2022 թվականի փետրվարի 14-ի դիմումը, Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային համակարգից ներբեռնված փաստաթուղթ և գույքի նվիրատվության պայմանագիր:)

Ընկերության՝ Մխիթար Մաթևոսյանին պատկանող բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ պայմանագիր առկա չէ: Ընկերության լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության դադարման մասին տեղեկություններ միասնական գրանցամատյանում առկա չեն:

4.7. **2022 թվականի նոյեմբերի 11-ին և դեկտեմբերի 6-ին Պետական եկամուտների կոմիտեից** ստացված տեղեկատվության համաձայն՝

- Ընկերությունը հաշվառվել է 2013 թվականի հունվարի 16-ին և ունի «գործող» կարգավիճակ:

- Մխիթար Մաթևոսյանի կողմից Ընկերության հետ աշխատանքային հարաբերությունները դադարեցվել են **2021 թվականի հոկտեմբերի 8-ին**:

- 2021 թվականի դեկտեմբեր - փետրվար ամիսների ընթացքում Ընկերության իրացման շրջանառությունը կազմել է ՀՀ դրամ:

- Ներկայացվել է 01.10.2021 - 31.03.2022 թթ. ընկած ժամանակահատվածում Ընկերության կողմից ներկայացված գրանցման հայտերի վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև Ընկերության աշխատողների ցանկը՝ 2017-2021 թվականների համար:

- 2022 թվականի հունվար - փետրվար ամիսների ընթացքում, ըստ տնտեսական գործունեության դասակարգչի, առկա են Ընկերության ծավալած գործունեության վերաբերյալ տվյալներ

- Ներկայացվել են Ընկերության կողմից ըստ հայտարարագրած գործունեության ոլորտների հարկային մարմին ներկայացրած հարկային հաշվարկների պատճենները:

4.8. Վայքի համայնքապետարանի և Ընկերության միջև կնքված թիվ **ՎՁՄ-ՎՀ-ԲՄԱՇՁԲ-22/2-1** պայմանագրի կնքումն իրականացվել է **բաց մրցույթ ընթացակարգով**, մինչդեռ, գնումների պլանում գնման ձևը սահմանված է **գնանշման հարցում ընթացակարգով**: **Պայմանագրի նախահաշվային գինը** սահմանված է **395,289,500** ՀՀ դրամ: Մրցույթին մասնակցության հայտ են ներկայացրել 2 ընկերություններ՝ «Մավշին» ՍՊԸ-ն՝ **405,600,000.00** ՀՀ դրամ գնային առաջարկով և «Թրենդ» ՍՊԸ-ն՝ **395,270,390.00**

ՀՀ դրամ գնային առաջարկով: Գնահատող հանձնաժողովի կողմից ընտրվել է «Մավշին» ՍՊԸ-ն՝ պայմանավորված մասնակիցների կողմից, մասնավորապես՝ «Մավշին» ՍՊԸ-ի դեպքում՝ ներկայացված փաթեթում **ծավալաթերթ-նախահաշվի**, իսկ «Թրենդ» ՍՊԸ-ի դեպքում՝ համապատասխան աշխատանքներ կատարելու իրավունքը հավաստող **լիցենզիաների բացակայության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունների՝** ծանուցմամբ սահմանված ժամկետում միայն «Մավշին» ՍՊԸ-ի կողմից շտկելու հանգամանքով: Պայմանագիրը կնքվել է **2022 թվականի օգոստոսի 4-ին 405,600,000.00** (չորս հարյուր հինգ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով: Պայմանագիրը ստորագրված է «Մավշին» ՍՊԸ-ի տնօրեն Մերի Մարգարյանի և Վայքի համայնքապետ Մխիթար Մաթևոսյանի կողմից:

4.9 **2022 թվականի օգոստոսի 11-ին** «Հետք» էլեկտրոնային լրատվամիջոցի կողմից հրապարակվել է «Վայքի համայնքապետը 537 միլիոն դրամի պայմանագրեր է կնքել իր կնոջ ընկերության հետ» վերտառությամբ **հոդվածը**:

4.10. 2022 թվականի սեպտեմբերի 5-ին «Մավշին» ՍՊԸ-ի տնօրեն Արտակ Հովհաննիսյանը գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից ուղարկված ծանուցագրով տեղեկացվել է, որ «գնման ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից անզգուշաբար հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է գնման առարկայի նախահաշվային գինը» և առաջարկվել է ներկայացնել նոր՝ նվազեցված գնային առաջարկ: 2022 թվականի սեպտեմբերի 6-ին «Մավշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է ծավալաթերթ-նախահաշիվը, նվազեցված գնային առաջարկը և կնքման ենթակա պայմանագրի նախագիծը:

4.11. **2022 թվականի սեպտեմբերի 6-ին** կնքվել է նոր պայմանագիր 394,881,470.00 (երեք հարյուր իննսունչորս միլիոն ութ հարյուր ութսունմեկ հազար չորս հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով և կատարման նոր ժամկետով: Պայմանագիրը ստորագրված է «Մավշին» ՍՊԸ-ի տնօրեն Արտակ Հովհաննիսյանի կողմից:

4.12. Թիվ 21103422 քրեական վարույթը կարճելու մասին որոշմամբ արձանագրվել է որպես վկա հարցաքննված Վայք համայնքի ղեկավար Մխիթար Մաթևոսյանի՝ «Մավշին» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի առնչությամբ գնային առաջարկի

նվազեցման վերաբերյալ ծանուցում ուղարկելու հանձնարարականի վերաբերյալ ցուցմունքը:

V. Անհամատեղելիության և շահերի բախման վերաբերյալ օրենսդրական կարգավորումներ, կիրառելի իրավական հիմքեր

1. «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 25-րդ հոդվածով սահմանված է համայնքի ղեկավարի պաշտոնի անհամատեղելիության պահանջը, որի համաձայն՝ **համայնքի ղեկավարը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ**, զբաղեցնել այլ պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

2. «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքի գործողությունը տարածվում է հանրային իշխանության մարմինների վրա, ինչպես նաև հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վրա: Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոնը դասակարգվում է խմբերի՝ պետական և համայնքային: Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորման համաձայն՝ համայնքների ղեկավարի պաշտոնը հանդիսանում է **համայնքային քաղաքական պաշտոն**: Օրենքի 31-րդ հոդվածով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար սահմանվել են անհամատեղելիության պահանջներ:

3. Օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով ամրագրված են առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու և **ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հասկացությունները**՝ հետևյալ բովանդակությամբ.

4. Օրենքի իմաստով առևտրային կազմակերպությունում (բացառությամբ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերի հիման վրա ստեղծված կազմակերպությունների) պաշտոն զբաղեցնելու ներքո հասկացվում է՝

1) առևտրային կազմակերպության կառավարման մարմնում ընդգրկված լինելը.

2) առևտրային կազմակերպությունում ցանկացած այլ պաշտոն զբաղեցնելը.

3) առևտրային կազմակերպության գույքի հավատարմագրային կառավարիչ լինելը.

4) սույն մասի 1-3-րդ կետերում նշված դեպքերից բացի, որևէ այլ ձևով առևտրային կազմակերպության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման գործառույթների իրականացմանը ներգրավված լինելը:

(...)

Նույն օրենքի իմաստով ձեռնարկատիրական գործունեություն է համարվում՝

1) անհատ ձեռնարկատեր լինելը.

2) առանց պետական գրանցման կամ հաշվառման ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում.

3) **առևտրային կազմակերպության մասնակից լինելը, բացառությամբ այն դեպքի, երբ առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն ամբողջությամբ հանձնվել է հավատարմագրային կառավարման**:

5. Օրենքի 31-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ) ունենալու դեպքում հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են ***պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝*** **մեկ ամսվա ընթացքում, այն օրենքով սահմանված կարգով հանձնել հավատարմագրային կառավարման**:

6. Մինչև ««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 7-ի ՀՕ-540-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ (ուժի մեջ է մտել 2023 թվականի հունվարի 1-ին) Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ **շահերի բախումն իրավիճակ է**, երբ պաշտոն զբաղեցնող անձն իր լիազորություններն իրականացնելիս կատարում է գործողություն կամ ընդունում որոշում, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել:

7. Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ պաշտոն զբաղեցնող անձի՝ իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվելը նշանակում է անձի լիազորությունների շրջանակում այնպիսի գործողություն կատարելը կամ որոշում ընդունելը, որը թեև ինքնին օրինական է, սակայն

հանգեցնում կամ նպաստում է կամ ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել նաև **իր կամ իր հետ փոխկապակցված անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գույքային կամ իրավական դրության բարելավմանը:**

Միևնույն ժամանակ Օրենքի նույն հոդվածի 8-րդ մասը կարգավորում է փոխկապակցված անձանց շրջանակը՝ սահմանելով, որ սույն օրենքի իմաստով փոխկապակցված անձինք են պաշտոն զբաղեցնող անձի (...) **ամուսինը**:

8. «Գնումների մասին» օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները, մասնավորապես **գնման գործընթացը** բնորոշվում է որպես գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը: Միաժամանակ նույն իրավադրույթով սահմանված է **գնման գին** հասկացությունը, որը բնորոշվում է որպես ապրանքը, աշխատանքը, ծառայությունը ձեռք բերելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հաշվարկված **նախահաշվային գին**:

9. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված է գնումների գործընթացի կազմակերպման կարգը (**այսուհետ՝ Կարգ**), որի 4-րդ կետով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝ 1) գնումների պլանավորում, 2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը), 3) պայմանագրի կնքում, 4) պայմանագրի կատարում և կառավարում: Կարգի 6-րդ կետի համաձայն՝ պատվիրատուի ղեկավարը՝ տեղական ինքնակառավարման մարմիններում՝ համայնքի ղեկավարն է կամ վերջինիս կողմից լիազորված պաշտոնատար անձն է, Կարգի 7-րդ կետի համաձայն՝ պատվիրատուի ղեկավարը, ի թիվս այլ գործառույթների, կնքում է պայմանագիրը, հաստատում է գնման ընթացակարգի արձանագրությունը, իսկ Կարգի 14-րդ կետով սահմանված կարգավորման համաձայն՝ Գնահատող հանձնաժողովը, ի թիվս այլ գործառույթների, հաստատում է գնումների կամ նախաորակավորման հայտարարության և հրավերի տեքստերը, փոփոխություններ է կատարում գնումների հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման հայտարարության տեքստերում, բացում և գնահատում է

հայտերը, որոշում է գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին), գնման **ընթացակարգը հայտարարում է չկայացած:**

10. **Կարգի 40-րդ կետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում՝**

(--) 4) Հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը, կամ եթե **դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան**, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: 41-րդ կետով սահմանված է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

11. «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից, իսկ 37-րդ հոդվածով սահմանվում է, որ **գնման ընթացակարգը չկայացած է** հայտարարվում, եթե **հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին**:

12. Կարգի 98-րդ կետի համաձայն՝ եթե *ընտրված մասնակցի գնային առաջարկը գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը,* ապա **պատվիրատուն կարող է ընտրված մասնակցին առաջարկել նվազեցնել իր գնային առաջարկը**: Անհամաձայնության դեպքում տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և պատվիրատուն բանակցությունների է հրավիրում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակցին, որի անհամաձայնության դեպքում այդ մասնակցի հայտը ևս մերժվում է, և բանակցությունների է հրավիրվում հաջորդաբար

տեղ զբաղեցրած մասնակիցը, որի անհամաձայնության դեպքում էլ **մրցույթը հայտարարվում է չկայացած:**

13. «Գնումների մասին» օրենքի 38-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների համաձայն.

«1. Գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, **բացառությամբ**՝

1) երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է **գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ** կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գ**նային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները**: Սույն կետի համաձայն վարվող **բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը**, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ».

14. Կարգի 33-րդ կետով սահմանված է, որ Պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ՝ (...) 8) այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում **արձանագրվում է**, որ **գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը**, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները **մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար**:

15. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ի թիվս այլ դեպքերի, Հանձնաժողովը կարող է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի

կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման վերաբերյալ վարույթներ հարուցել լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա:

16. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովը վարույթի արդյունքում խախտման կամ դեպքի վերաբերյալ ընդունում է եզրակացություն:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարույթի արդյունքում Հանձնաժողովն ընդունում է եզրակացություն պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների խախտման առկայության կամ բացակայության մասին կամ համապատասխան պաշտոն զբաղեցնող անձի կողմից վարքագծի կանոնների խախտման առկայության կամ բացակայության մասին, իսկ իրավիճակային շահերի բախման դեպքի կապակցությամբ՝ շահերի բախման իրավիճակի առկայության կամ բացակայության մասին:

VI. Հանձնաժողովի պատճառաբանություններն ու եզրահանգումը

1. Անհամատեղելիության պահանջների խախտումների վերաբերյալ սույն վարույթի շրջանակներում ձեռքբերված փաստական հանգամանքների ուսումնասիրության և դրանց նկատմամբ կիրառելի իրավանորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

Անհամատեղելիության պահանջներ սահմանող իրավակարգավորումներից հետևում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին ներկայացվող օրենսդրական պահանջներն ընդգրկում են երեք բաղադրիչներ, այն է՝ այլ պաշտոն զբաղեցնելու, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, այլ վճարովի աշխատանք կատարելու արգելքները, որոնցից յուրաքանչյուրին առնչվող իրավակարգավորումները սահմանված են «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի առանձին դրույթներում:

Մասնավորապես, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու բաղադրիչի ներքո սահմանված օրենսդրական կարգավորումների վերլուծությունից հետևում է, որ առևտրային կազմակերպության մասնակից լինելը ձեռնարկատիրական գործունեություն չի դիտարկվում, երբ առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն ամբողջությամբ հանձնվել է հավատարմագրային կառավարման:

Նման իրավակարգավորումից հետևում է, որ հանրային կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու ընթացքում **առևտրային կազմակերպության մասնակցության արգելքը բացարձակ է**:

Միաժամանակ, Օրենսդիրը, ամրագրելով անհամատեղելիության պահանջները, զուգահեռաբար հանրային և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց համար սահմանել է լրացուցիչ երաշխիք, որի արդյունքում վերջիններս հնարավորություն ունեն պաշտոնի նշանակվելուց կամ ընտրվելուց հետո **մեկամսյա ժամկետում վերացնելու իրենց զբաղեցրած պաշտոնի հետ անհամատեղելի այլ գործունեությունը**, դրանով իսկ բացառելով կամ նվազագույնի հասցնելով հանրային և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց մոտ շահերի բախման իրավիճակները:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառելի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հասկացության՝ իրավական վերոնշյալ կարգավորումների, համատեքստում գնահատելով սույն վարույթում էական նշանակություն ունեցող փաստերը, բազմակողմանի հետազոտելով ձեռքբերված ապացույցները՝ Հանձնաժողովը փաստում է, որ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավարի պաշտոնը զբաղեցնող Մխիթար Մաթևոսյանը, միաժամանակ հանդիսանալով առևտրային գործունեություն իրականացնող և շահույթ ստանալու նպատակ հետապնդող Ընկերության միակ մասնակիցը, կազմակերպության մասնակցի իր բաժնեմասը նվիրատվության պայմանագրով նվիրել է կնոջը պաշտոնը ստանձնելուց հետո՝ Օրենքով նախատեսված ժամկետի խախտմամբ:

Տվյալ դեպքում, Մխիթար Մաթևոսյանը 2021 թվականի դեկտեմբերի 17-ին ստանձնել է ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավարի պաշտոնը, իսկ մինչ այդ ՀՀ վարչապետի 2021 թվականի հոկտեմբերի 12-ի 1146-Ա որոշմամբ նշանակվել է ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավարի պաշտոնակատար:

Այսպես, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ հանրային պաշտոն զբաղեցնող անձին արգելվում է զբաղեցնել այլ պաշտոն (կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում) կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

Տվյալ պարագայում, Ընկերության կողմից 2022 թվականի դեկտեմբերի 6-ին ներկայացված գրության և կից նյութերի ուսումնասիրության, ինչպես նաև փաստական հանգամանքները հավաստող գործում առկա այլ նյութերի հետ համադրման արդյունքում Հանձնաժողովի կողմից վեր են հանվել մի շարք անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- Ընկերության կողմից ներկայացված տեղեկանքի համաձայն՝ **13.10.2021 - 16.02.2022**թթ. ընկած ժամանակահատվածում Ընկերության **տնօրենը հանդիսացել է Արտակ Աշոտի Հովհաննիսյանը**:

- 2022 թվականի դեկտեմբերի 6-ին ներկայացվել է Ընկերության միակ մասնակից Մխիթար Մաթևոսյանի 2021 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 31 հրամանը՝ Արտակ Աշոտի Հովհաննիսյանին Ընկերության գլխավոր տնօրեն նշանակելու վերաբերյալ: Մինչդեռ, գործում առկա 2022 թվականի նոյեմբերի 18-ին Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից ստացված նյութերի համաձայն՝ պետական միասնական գրանցամատյանում Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի փոփոխության համար հիմք է հանդիսացել Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի կողմից տրված լիազորագրի հիման վրա հանդես եկող Հովսեփ Սարգսյանի՝ պետական միասնական գրանցամատյանում գործադիր մարմնի ղեկավարի փոփոխության վերաբերյալ գրառում կատարելու մասին թիվ 792658 դիմումը և Ընկերության միակ մասնակից Մերի Մարգարյանի՝ 2022 թվականի փետրվարի 16-ի թիվ 1/22 որոշումը՝ Ընկերության **գործադիր մարմնի ղեկավարի՝ Մխիթար Մաթևոսյանի** լիազորությունները դադարեցնելու և Մերի Մարգարյանին նոր ղեկավար նշանակելու վերաբերյալ:

- Հարկային հաշվետվությունում ամրագրված տվյալների՝ մասնավորապես, վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի անհատական տվյալների համաձայն՝ Մխիթար Մաթևոսյանի կողմից Ընկերության հետ աշխատանքային հարաբերությունները դադարեցվել են 2**021 թվականի հոկտեմբերի 8-ին:**

Վարույթի շրջանակներում ձեռքբերված վերը թվարկված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել է բովանդակային տարբերություն Ընկերության կողմից Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց

պետական ռեգիստր ներկայացված՝ Ընկերության միակ մասնակից Մերի Մարգարյանի **2022 թվականի փետրվարի 16-ի թիվ 1/22 որոշման** և Ընկերության միակ մասնակից Մխիթար Մաթևոսյանի **2021 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 31 հրամանի**, ինչպես նաև Ընկերության մի շարք աշխատակիցների՝ Արտակ Հովհաննիսյանի կողմից ստորագրված՝ ազատման հրամանների միջև, ինչի արդյունքում ձևավորվել է հիմնավոր կասկած առ այն, որ Հանձնաժողով ներկայացված՝ Ընկերության միակ մասնակից Մխիթար Մաթևոսյանի 2021 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 31 հրամանը չի կազմվել 2021 թվականի հոկտեմբերի 7-ին, իսկ Ընկերության աշխատակիցների՝ Արտակ Հովհաննիսյանի կողմից ստորագրված՝ աշխատանքից ազատման հրամանները՝ դրանցում նշված համապատասխան ամսաթվերին, այլ կազմվել են միայն Հանձնաժողովում հարուցված վարույթից հետո՝ նպատակ ունենալով չեզոքացնել անհամատեղելիության պահանջների հնարավոր խախտումները, ինչի հանգամանքն էական նշանակություն ունի Հանձնաժողովի համար անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով հարուցված վարույթի շրջանակներում վերջնական եզրակացության հանգելու համար:

Հանձնաժողովը գալով այն հետևության, որ առերևույթ առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածով նախատեսված՝ առևտրային կամ այլ կազմակերպության կողմից տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հավաստող կամ իրավունք վերապահող փաստաթղթեր կեղծելու՝ կեղծողի կողմից անձամբ կամ այլ անձի կողմից այն օգտագործելու կամ իրացնելու առերևույթ հանցագործության հատկանիշներ, դիմել է Գլխավոր դատախազություն համապատասխան հիմքերի առկայության դեպքում ընթացք տալու նպատակով:

Տվյալ պարագայում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործի նյութերով հարուցված քրեական գործը կարճվել է Քրեական օրենսգրքով սահմանված որևէ հանցանքի բացակայության հիմքով, Հանձնաժողովը անհամատեղելիության պահանջների՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածով ամրագրված առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու առերևույթ խախտումների մասով վարույթում առկա նյութերը գնահատման առարկա չի դարձնում:

Այսպիսով, Հանձնաժողովը, սույն գործով գնահատման առարկա է դարձնում Մխիթար Մաթևոսյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող Ընկերության 100% բաժնետեր հանդիսանալու վարքագիծը (միակ բաժնեմասնակից

հանդիսանալու փաստի ուժով) և անհրաժեշտ է համարում արձանագրել, որ պաշտոնատար անձանց նկատմամբ վերոնշյալ իրավանորմերով սահմանված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքը կրում է իմպերատիվ և շարունակական (չընդհատվող) բնույթ: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ պաշտոնատար անձը որոշակի ժամանակում արդեն իսկ դրսևորել է անգործություն (հանդիսանալով առևտրային կազմակերպության մասնակից՝ բաժնեմասը չի հանձնել հավատարմագրային կառավարման, այլ օտարել է պաշտոնը ստանձնելուց հետո օրենքով սահմանված ժամկետից **միայն 61 օր անց**՝ ընտրությունների արդյունքում համայնքի ղեկավարի պաշտոնը ստանձնելուց հետո, իսկ փաստացի համայնքի ղեկավարի պաշտոնակատարի պաշտոնում ՀՀ Վարչապետի որոշմամբ նշանակվելուց **հետո 127 օր անց**)՝ չպահպանելով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելք սահմանող իրավանորմի պահանջը՝ հանդիսանում է ***անհամապատասխանության պահանջների խախտում թույլ տված անձ,*** անկախ այն հանգամանքից, որ կոնկրետ պահի բաժնեմասը, այնուամենայնիվ, օտարել է այլ անձի: Այսպես, Հանձնաժողովը գործում առկա նյութերով հաստատված է համարում նույն օրենսդրական դրույթով սահմանված *ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու բաղադրիչի ներքո ամրագրված անհամապատասխանության պահանջի խախտումն* առ այն, որ Ընկերության բաժնեմասը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված **մեկամսյա ժամկետում** չի հանձնվել հավատարմագրային կառավարման, իսկ նվիրատվության պայմանագրով բաժնեմասի օտարման պայմանագիրը կնքվել է Մխիթար Մաթևոսյանի՝ Վայքի համայնքապետի պաշտոնում պաշտոնավարման ընթացքում նույն ժամկետային սահմանափակումների խախտմամբ:

Ընդ որում, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել նաև այն իրողությունը, որ իր կողմից նախորդիվ կայացրած եզրակացություններում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու օրենսդրական արգելք սահմանող իրավանորմի պահանջների առնչությամբ արձանագրվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից բովանդակային խախտումների բացակայություն այն հանգամանքների հաշվառմամբ, որ վարույթի ընթացքում իրավասու մարմիններից ձեռք բերված տվյալներով հաստատված են համարվել այն փաստական տվյալները, որոնց համաձայն՝ առևտրային կազմակերպություններում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից հավատարմագրային կառավարման հանձնված չլինելը՝ իրացման

շրջանառության, ինչպես նաև փաստացի գործունեություն ծավալելու պարագայում, որակվել է որպես «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջի՝ տվյալ գործերով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքին առնչվող դրույթների ձևական առումով խախտում: Մինչդեռ, սույն գործով իրավասու մարմիններից ձեռք բերված տվյալներով հաստատված է համարվում Մխիթար Մաթևոսյանի կողմից հանրային պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածում Ընկերության իրացման շրջանառություն ունենալու, ինչպես նաև վարձու աշխատողներ ունենալու հանգամանքները:

2. *Շահերի բախման վերաբերյալ սույն վարույթի շրջանակներում ձեռքբերված փաստական հանգամանքների ուսումնասիրության և դրանց նկատմամբ կիրառելի իրավանորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.*

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Հանրային ծառայության մասին» օրենքը անձնական շահերով առաջնորդվելու հանգամանքի առկայության կամ բացակայության համար, ի թիվս այլ դրսևորումների, Օրենքն անձնական շահերով առանջնորդվել է դիտարկում նաև այն դեպքերը, երբ անձն իր լիազորությունների շրջանակներում կատարում է գործողություն կամ կայացնում է որոշում, որը թեև օրինական է, սակայն հանգեցնում կամ նպաստում է նաև (...) **իր կամ իր հետ փոխկապակցված անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գույքային կամ իրավական դրության բարելավմանը**: Նման դեպքերի առկայության պարագայում Օրենքի նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին (եթե վերադաս կամ անմիջական ղեկավար ունի) ներկայացնել գրավոր հայտարարություն շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին և մինչև վերադասի համաձայնություն ստանալը ձեռնպահ մնալ հարցի վերաբերյալ գործողություն կատարելուց կամ որոշում կայացնելուց: Նման կարգավորումներով Օրենքն ապահովում է, որ «անձնական շահերով առաջնորդվելու» վարկածը ստանա ողջամիտ մեկնաբանություն և ունենա այն չեզոքացնելու հնարավորություն՝ զերծ պահելով նաև անձին նման իրավիճակներում որոշում կայացնելու, գործողություն կատարելու համար սահմանված պատասխանատվությունից:

Սույն գործում առկա փաստական տվյալների համաձայն՝ Մխիթար Մաթևոսյանը, որպես պատվիրատուի ղեկավար պայմանագիր է կնքել Օրենքի իմաստով իր հետ փոխկապակցված անձի՝ ամուսնու բաժնեմասնակցությամբ առևտրային կազմակերպության («Մավշին» ՍՊԸ-ի) հետ: Ընդ որում, պայմանագիրը կնքվել է գնումների արդյունքում հաղթող ճանաչված միակ մասնակցի հետ, որի կողմից գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված գնային առաջարկն ի սկզբանե գերազանցել է գնման առարկայի նախահաշվային գինը: Նշված բարձր գնով, ըստ էության, կնքվել է պատվիրատուի ղեկավարի, տվյալ պարագայում համայնքի ղեկավար Մխիթար Մաթևոսյանի և իր կնոջ Մերի Մարգարյանի 100% բաժնեմակցությամբ ընկերության միջև համայնքի կարիքների համար հայտարարված գնման գործընթացի արդյունքում առաջին պայմանագիրը (Պայմանագիրը կնքվել է 2022 թվականի օգոստոսի 4-ին 405,600,000.00 (չորս հարյուր հինգ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով):

Ինչ վերաբերում է 2022 թվականի հունիսի 1-ին կնքված թիվ ՎՁՄ-ՎՀ-ԳՀԱՇՁԲ-22/7 պայմանագրի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից վեր հանված առերևույթ խախտումներին, ապա նշված պայմանագրի առնչությամբ քրեական գործի նյութերով փարատվել են Քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցանքի առկայության, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված ընթացակարգային պահանջների խախտումների վերաբերյալ կասկածները, իսկ քրեական վարույթը կարճվել է՝ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցանքի բացակայությունը հաստատվելու հիմքով:

2022 թվականի օգոստոսի 4-ին կնքված թիվ ՎՁՄ-ՎՀ-ԲՄԱՇՁԲ-22/2-1 պայմանագրի առնչությամբ Հանձնաժողովը, համակցության մեջ գնահատելով գործով ձեռք բերված տվյալները, դրանց նկատմամբ կիրառելի օրենսդրական կարգավորումների հետ, փաստում է, որ օրենսդրությամբ գնահատող հանձնաժողովին է վերապահված գնման ընթացակարգը կայացած չհամարելու իրավասությունը բոլոր այն դեպքերում, երբ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին, այնուամենայնիվ, այն դեպքում, երբ մասնակցի գնային առաջարկը գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը, ապա պատվիրատուն կարող է ընտրված մասնակցին առաջարկել նվազեցնել իր գնային առաջարկը, իսկ անհամաձայնության դեպքում

տվյալ մասնակցի հայտը ենթակա է մերժման: Այսպես, սույն գործով ձեռք բերված նյութերում առկա չեն փաստական տվյալներ առ այն, որ մինչև պատվիրատուի հետ պայմանագրի կնքումը, տեղի են ունեցել բանակցություններ մասնակցի գնային առաջարկի շուրջ: Տվյալ պարագայում, քրեական գործով արծարծվել է այն հանգամանքը, որ քարտուղարի կողմից անզգուշաբար հաշվի չի առնվել այն, որ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է գնման առարկայի նախահաշվային գինը և միայն 2022 թվականի օգոստոսի 4-ին պայմանագրի կնքումից հետո 2022 թվականի սեպտեմբերի 5-ին է առաջարկվել Ընկերությանը ներկայացնել նոր՝ նվազեցված գնային առաջարկ: Նշված իրադարձություններից հետո 2022 թվականի սեպտեմբերի 6-ին «Մավշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է ծավալաթերթ-նախահաշիվը, նվազեցված գնային առաջարկը և կնքման ենթակա պայմանագրի նախագիծը, որից հետո միայն **2022 թվականի սեպտեմբերի 6-ին** կնքվել է նոր պայմանագիր 394,881,470.00 (երեք հարյուր իննսունչորս միլիոն ութ հարյուր ութսունմեկ հազար չորս հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով և կատարման նոր ժամկետով: Հատկանշական է այն, որ քրեական վարույթը կարճելու մասին որոշմամբ արձանագրված են որպես վկա հարցաքննված Մխիթար Մաթևոսյանի ցուցմունքները, որոնցում, մասնավորապես,

Վերոշարադրյալի հաշվառմամբ, Հանձանաժողովն արձանագրում է, որ 2022 թվականի սեպտեմբերի 6-ին նոր գնային առաջարկով պատվիրատուի և «Մավշին» ՍՊԸ-ի միջև միևնույն գնման ընթացակարգի շրջանակում երկրորդ պամանագրի կնքումն արդեն իսկ վկայում է այն մասին, որ առնվազն 2022 թվականի սեպտեմբերի 6-ի դրությամբ համայնքի ղեկավարը տեղյակ է եղել այն հանգամանքի մասին, որ գնման գործընթացում «Մավշին» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, և պայմանագրի կնքմամբ ուղղակի նպաստել է իր հետ փոխկապակցված անձի գույքային դրության բարելավմանը: Նշվածն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն պարտավոր էր լուծել պայմանագիրը, քանի որ արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ հիմք կհանդիսանային պայմանագիրը (2022 թվականի սեպտեմբերի 6-ին կնքված) չկնքելու համար: Մինչդեռ, պատվիրատուն, միևնույն գնման ընթացակարգի հիմքով, իր լիազորությունների շրջանակում, կատարել է գործողություն՝ կնքելով իր հետ փոխկապակցված անձի բաժնեմասնակցությամբ առևտրային կազմակերպության հետ երկրորդ պամանագիր, այդ կերպ հայտնվելով Օրենքի իմաստով շահերի բախման իրավիճակում:

Տվյալ պարագայում, երկրորդ (2022 թվականի սեպտեմբերի 6-ին կնքված) պայմանագիրը կնքվել է այնպիսի գնային առաջարկով, որը նախատեսված է եղել գնման առարկայի նախահաշվային գնով, ինչը, թերևս, կարող է վկայել այն մասին, որ հանրային շահին այս առնչությամբ ուղղակի վնաս չէր կարող պատճառվել, սակայն

համայնքի ղեկավարի գործողությունները, սույն վարույթում քննարկված փաստական հանգամանքների շրջանակում, ողջամտորեն հանգեցնում կամ նպաստում են իր կամ իր հետ փոխկապակցված անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գույքային դրության բարելավմանը: Հանձնաժողովի նման եզրահանգման համար, մասնավորապես, հիմք է հանդիսանում այն, որ քննարկվող պայմանագիրը կարող էր կնքվել նոր հայտարարված գնման ընթացակարգի արդյունքում՝ հաշվի առնելով այն օրենսդրական պահանջը, որ պայմանագիրը ենթակա է կնքման միայն գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա: Մինչդեռ, սույն պարագայում առկա է գնահատող հանձնաժողովի այնպիսի որոշում, որի կայացումից հետո, երբ տեղի է ունեցել մասնակցի առաջարկած գնի փոփոխություն, որն էլ հանդիսացել է համայնքի ղեկավարի լիազորությունների շրջանակում նոր կնքված պայմանագրի գինը:

Սույն վարույթի շրջանակներում պարզված փաստական հանգամանքների համադրումից և վերոնշյալ իրավական նորմերի վերլուծությունից Հանձնաժողովը ***եզրահանգում է,*** որ Մխիթար Մաթևոսյանն իր գործողություններով չի ապահովել Օրենքի 31-րդ և 33-րդ հոդվածներով հանրային պաշտոն զբաղեցնող անձի համար սահմանված պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալ հիմնավորումները և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 33-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը, գնահատելով գործում առկա ապացույցները, բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝

ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է.

ՀՀ Վայոց Ձորի Վայք համայնքի ղեկավար Մխիթար Կոլյայի Մաթևոսյանի կողմից անհամատեղելիության պահանջների բովանդակային խախտման, ինչպես նաև վերջինիս գործողություններում շահերի բախման իրավիճակի առկայության մասին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**